

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻՅՈՒԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը, գարեր շարունակ գտնվելով օտար տիրապնտոթյան տակ, սովոր, ազգատոթյան և կոտորածի պայմաններում, միշտ հարազատ է մնացել իր ազգային կուլտուրային, իր համեստ լուսան մուծել գիտոթյան գանձարանը:

Սովետական իշխանության տարիներին միայն ստեղծվեցին այն բոլոր պայմանները, որոնք գարեր ավելի հայ ժողովրդի վերածնմանը, նրա տնտեսական ու կուլտուրական բարգավաճամանը: Մինչ սովետական կարգերի հաստատումը, գծվար թե գտնվեր մեկը, որ երազեր, թե երեսէ Հայաստանը անենալու է զարցցների լայն ցանց, տասնյակ մասնագիտական և գիտահետազոտական ինստիտուտներ, և, վերջապես, գիտությունների ակադեմիա: Այսօր այդ բոլորը իրականություն է զարձել:

Երեքնք արխիվային մի քանի փաստաթթվեր, որոնք մեզ ծանոթացնում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպման պատմության հետ:

Մինչև 1935 թ. Անդրկովկասյան սեպառնիկաններում տարկող գիտահետազոտական աշխատանքներ անդրշականորեն զեկավառում էր ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անդրկովկասյան ֆիլիալը: 1935 թ. հունվարին գիտահետազոտական աշխատանքները ուժեղացնելու նպատակով, Հայկական ՍՍՌ Ժողովում սոցհը որոշ ընդունեց կազմակերպել ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անդրկովկասյան ֆիլիալը Հայկական բա-

ժանմունք, որը հետագայում վերանվագեց ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի:<sup>1</sup>

ՍՍՌ ԳԱ Հայկական ֆիլիալի նախագահության կազմի մեջ ընտրվեցին ակադեմիկոս Ֆ. Յու. Արքոսոն-Լևսովները (նախագահ), Ա. Խ. Մելիքը (փոխ-նախագահ), ակադեմիկոս Հ. Ա. Օրելին, Բիոլոգիական ինստիտուտի գիրքնեկոոր Ե. Վ. Վալինովը գիրքնեկոորի տնօպական պրոֆ. Հ. Տ. Կարապետյանը և Քիմիայի ինստիտուտի գիրքնեկոոր Ա. Գ. Հավիաննելյանը:<sup>2</sup>

Այդ շրջանում ՍՍՌ ԳԱ Հայկական ֆիլիալի գիտահետազոտական հաստատությունների թվին էին որաշկանում:

ա) Երկրաբանական ինստիտուտի և թանգարանի բազայի վրա կառուցված երկրաբանական և հողագիտական սեկտորները.

բ) Քիմիայի ինստիտուտը, որին ննթակա էին օրգանական քիմիայի, ֆիզիկական և պնօքանական քիմիայի, բիոքիմիայի լաբորատորիաները.

գ) Բիոբիումիայի ինստիտուտը, որի մեջ էին մտնում բուսաբանական, կենդանաբանական և բույսերի գենետիկայի սեկցիաները, արխենոգիայի և էթնոգրաֆիայի սեկտորը:<sup>3</sup>

1 Հայկ. ՍՍՌ ԳԱ արխիվ, 1935 թ., գ. 11; թ. 32:

2 Խույն անգը, գ. 1, թ. 8:

3 Խույն անգը:

Բացի վերոհիշյալ գիտահետազոտական հաստատություններից, ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալին կից գոյություն ուներ, ա) էքսպեդիցիոն բյուրո, բ) հրատարակչական հանձնաժողով:

Համաձայն Հայկական ՍՍՌՄ Ժողովումնորհի 1935 թ. հունվարի 27-ի որոշման, ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալին հանձնվեցին նաև Բնապատճեկան և Երկրաբանական թանգարանները, Անանա լճի ուսումնասիրության նյութերը և թանգարանը, Ենյամիկ կայանը, Հայաստանի ջրային տնտեսության լարորատորիան և Հողագիտության վերաբերյալ թանգարանային ընույթի կրող բոլոր նյութերը, ինչպես օրինակ, քարտեզներ, հողանմուշներ, հերթարիումներ և այլն<sup>1</sup>:

Հետագայում, համաձայն ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի նախագահության 1936 թ. մարտի 28-ի որոշման, Բիուլուգիական ինստիտուտին կից ստեղծվեց միերրորիոլոգիական սեկտոր<sup>2</sup>:

Ծեսապուրլիկայում տարվող գիտահետազոտական աշխատանքները ղեկավարելու համար ֆիլիալը ուներ 42 հոգուց բաղկացած Գիտական խորհուրդ<sup>3</sup>: Այդ ըքանում ֆիլիալի ինստիտուտներում, սեկտորներում և լարորատորիաներում աշխատում էին 73 գիտական աշխատողներ:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, երբ սովետական հերոս ժողովուրդը արիաբար պաշտպանում էր իր Հայրենիքը, Կոմինիստական պարտիայի ու Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ, Հայաստանում հիմնադրվեց գիտությունները ակադեմիա:

Հայկական ՍՍՌՄ Ժողովումնորհի 1943 թ. նոյեմբերի 10-ի որոշման մեջ ասված է:

«Հաշվի առնելով Հայաստանում Սովետական իշխանության տարիներին գիտահետազոտական հաստատությունների ցանցի լայն զարգացումը, գիտական աշխատողների բարձրորակ

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌՄ ԳԱ արխիվ, 1935 թ., գ. 12, թ. 11:

<sup>2</sup> Նույն տեղը, գ. 7, թ. 16:

<sup>3</sup> Նույն տեղը, գ. 7, թ. 8:

կազմերի ամն և նրանց արդյունավետագույն հայկական ՍՍՌՄ էկոնոմիկայի ու կուտարայի զարգացման և երկրի պաշտպանության ամրապնդման ասպարեզում, Հայկական ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ո բոլոր նյութերը:

1. Ծեսապուրլիկայի գիտահետազոտական հաստատությունների ղեկավարությունը գիտական միասնական ղեկավար կենտրոնում համամերելու նպատակով և գիտական աշխատանքի հետագա էլ ավելի նպատակասլաց զարգացման համար, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի բազայի վրա Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևան քաղաքում, կազմակերպել Հայկական ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիաս<sup>4</sup>:

Պատմական այդ խոշոր իրադարձությունը շտեսնված խանդակությամբ ընդունվեց ուստապուրլիկայի բանվորների, կոլտնտեսականների և ինտելիգենցիայի կողմից: Լենինյան ազգային քաղաքականության հետեղական կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանը ունեցավ գիտությունների ակադեմիա:

1943 թ. Հայկական ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ ընտրվեցին Հայ պատվարժան գիտնականներ Հ. Ա. Օրբելին, Լ. Ա. Օրբելին, Վ. Հ. Համբարձումյանը, Ա. Ա. Սերբերը, Վ. Ա. Պափանցյանը, Մ. Խ. Արքովյանը, Ս. Ս. Մայլասյանը, Ա. Հ. Տերտերյանը, Հ. Հ. Մանանյանը, Խ. Ա. Կողովոյանը, Ա. Ի. Ալիխանյանը, Հայ անվանի բանաստեղծ Ա. Ս. Խանիալյանը և ուրիշներ<sup>5</sup>:

Նույն 1943 թ. ակադեմիայի ընդհանուր ժողովին բնարեց Հայկական ՍՍՌՄ ԳԱ նախագահությունը՝ հետեւյալ կազմով. Հ. Ա. Օրբելի (պրեզիդենտ), Վ. Հ. Համբարձումյան (վիցե-պրեզիդենտ), Վ. Վ. Եղիազարյան (պրեզիդենտ), Ի. Վ. Կողովոյանը, Խ. Ա. Կողովոյանը, Մ. Գ. Թումանյան, Գ. Ա. Ղափանցյան, Ս. Կ. Կարապետյան և Գ. Բ. Պետրոսյան (գիտ-քարտուզար):

<sup>4</sup> Հայկ. ՍՍՌՄ ԳԱ արխիվ, 1943 թ., գ. 6, թ. 1—2:

<sup>5</sup> Նույն տեղը, գ. 6, թ. 14—17:

իր կազմակերպման շրջանում Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիան ուներ հետևյալ կառուցվածքը:

1. ՀՍՍՌ ԳԱ. բնդիմանուր ժողով:

2. ՀՍՍՌ ԳԱ. նախագահության: Մրասալարատի մեջ էին մտնում նախագահության քարտուղարությունը, ուժեղականը, գործերի կառավարչությունը, նախագահության արձանագրությունների բաժինը, կազմերի գծով պրեզիդնարի օգնականը և բաժինը:

3. Հասարակական գիտուրյանների բաժանմունք: Մրաս կազմի մեջ էին մտնում Պատմության, Մ. Արեգանի անդամների կառավարչության, Ն. Մասի անվան Էնդվի ինստիտուտները, Պատմական թանգարանը և երաժշտության պատմության ու տեսության սեկտոր:

4. Ֆիզիկո-մարեմատիկական, բնական և տեխնիկական գիտուրյանների բաժանմունք: Մրաս կազմի մեջ էին մտնում Ֆիզիկո-մաթեմատիկական, Երկրաբանական, Ջրաէներգետիկ, Ենինայութերի և կառուցումների, Քիմիական գիտությունների կառուցումները, Աստղադիտարանը, Սեյսմիկ կայանը, Հիգրոէլեկտրական յարրատորիան:

5. Բիոլոգիական գիտուրյանների բաժանմունք: Մրաս կազմի մեջ էին մտնում Բուսաբանական աբդին, Սևանի Հիգրորիոլոգիական կայանը, Բուսաբանական, Կենդանաբանական, Բույսերի գենետիկայի, Ֆիզիոլոգիայի ինստիտուտները, միկրոբիոլոգիայի սեկտորը և կենդանաբանական այլքն:

6. Գյուղատնտեսական գիտուրյանների բաժանմունք: Մրաս կազմի մեջ էին մտնում Գինեգործության և խաղողագործության, Երկրագործության,

Անասնաբուժության ինստիտուտները, հողագիտության և էկոնոմիկայի սեկտորները:

Բացի վերոհիշյալ գիտական հաստատություններից, Հայկական ՍՍՌ ԳԱ այդ շրջանում ուներ Դիտական պրոպագանդայի և Խմբագրական-հրատարակչական խորհրդադիրներ:

1943—1961 թթ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում շատ փոփոխություններ են տեղի ունեցել: Բնական է, որ այդ տարիներին ուսումությայում էլ ավելի մեծ թափ են ստացել գիտահետազոտական աշխատանքները, դպավորեն աճել, ընդարձակվել է գիտական հաստատությունների ցանցը և սաստագատկվել աշխատող կազմերի թիվը Բավական է նշել, որ ներկայումս Հայաստանի Գիտությունների ակադեմիայի սիստեմում և գերատեսչական պրոբլեմները գործում են 79 գիտահետազոտական հիմնարկները 3409 գիտաշխատողներով, այդ թվում՝ գոկտորներ—79, թեկնածուներ—734:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, որի աշխատանքները սկսած 1947 թ. գիտավորում է աշխարհագույն գիտական, ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը, գիտության տարբեր ճյուղերի բնագավառում ձեռները բերած մեծ հաջողությունների շնորհիվ, գարձել է սովորական առաջավոր գիտության օջախներից մեկը:

Վ. ՄՈՒՀԻՄՅԱՅԻ  
ՀՍՍՌ ԳԱ արխիվի վարչի